ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ I-ԻՑ ՄԻՆՉԵՎ IX ԴԱՐ

ՀԱՆՍ ԴԻՏՏԵՆ (ԳԴՀ)

Երբեմնի բյուզանդական քաղաքացիներից կամ նրանց հետնորդներից (ժամանակավորապես Արաբական խալիֆայությանն անցած բյուզանդական արևելքի նախկին մարզերից և հարավ-արևելյան Եվրոպայի բարբարոսական պետություններից) ինչպես նաև սլավոններից, բուլղարներից և պարսիկ խուրամիտներից բացի բնակչության տեղաշարժերում մեծ դեր էին խաղում քրիստոնյա հայերը, որոնք ոչ թե Բյուզանդական կայսրությունից, այլ ամենից առաջ Սասանյան Պարսկաստանին, իսկ ավելի ուշ՝ Արաբական խալիֆայությանը պատկանող իրենց երկրի տարածքից գաղթում էին դեպի արևմուտքում գտնվող հարևան քրիստոնյա պետության սահմանները[1]։

Բյուզանդական կայսր Հուստին II-ի (565—578) կառավարման տարիներին, 571/72 թ. Հայաստանի պարսկական մասում տեղի ունեցած անհաջող ապստամբությունից հետո մեծ թվով հայ աղնվականներ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ և Դվինի կաթողիկոսի, ինչպես նաև հայ բարձրաստիճան հոգևորականության մի մասի ուղեկցությամբ փախան Կոստանդնուպոլիս։ Հուստին II-ը մերժեց հայ փախստականներին վերադարձնելու խոսքով I Անուշիրվանի պահանջը, հատկապես մատնացույց անելով նրանց քրիստոնյա լինելու փաստը։ Հայերին էին միացել նաև մի քանի վրացի աղնվականներ[2]։ *Թվում է, թե տեղաշարժի այս ալիքից է սկիզբ առել Պերգամոնի հայ-*

---

[1] *Այդ մասին տե՛ս* P. Charanis. The Armenians in the Byzantine Empire.— Byzantinoslavica 22(1961). p. 196—240. *հատկապես էջ 196—198 (վերահրատարակությունը տե՛ս նույնի՝* Studies on the demography of the Byzantine Empire. Collected Studies. London 1972. V); R.—J. Lilie. Die byzantinische Reaktion auf die Ausbreitung der Araber. Studien zur Strukturwandlung des byzantinischen Staates im 7. und 8. Jhd. (Miscellanea Byzantina Monacensia. 22). München. 1976. S. 24. 234. 245—247. 249; *Տե՛ս նաև* J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886. Paris. 1919. p. 190—193.

[2] *Տե՛ս Հովհան Եփեսացի. Եկեղեցական պատմություն. մաս III, գիրք Հ, գլուխ 21—24, մասնավորապես գլուխ 21 և հտ. (հմմտ. Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի [Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8].—Երևան, 1976, էջ 390—393։* Die Kirchengeschichte des Johannes von Ephesus, aus dem Syrischen übersetzt von J. M. Schönfelder.—München 1862. S. 64 sq.; The third part of the Ecclesiastical history of John, bishop of Ephesus, now first translated by R. Payne Smith.—Oxford 1860. p. 125 sq., Ioannis Ephesini Historiae ecclesiasticae pars tertia' Interpretatus est E. W. Brooks [Corpus Scriptorum Christianorum Orientalium 106. Scriptores Syri. Versio. ser. 3. tom. 3].— Lovanii 1936. p. 61 sq.); *(Հ. Գ. Մելքոնյան. 1976, էջ 430։* Schonfelder. 1862. S. 237; Payne Smith. 1860. p. 403; Brooks. 1936. p. 231); *Հմմտ. նաև Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզաբյանի, Երևան, 1979, էջ 67—68։* Theophylacti Simocattae Historiae. edidit C. de Boor. Lipsiae 1887 (editionem stereotypam correctiorem curavit... P. Wirth). Stutgardiae 1972). III 9. 9. p. 129. 7—12; Theophanis Chronographia. recensuit C. de Boor. I. Lipsiae 1883 *(վերահրատարակությունը՝* Hildesheim 1983). p. 245. 13—18. *արարչագործության աղեքսանդրյան 6064 թ. տակ։* The Ecclesiastical history of Euagrius with the Scholia. edited with introduction. critical notes. and indices by J. Bidez and L. Parmentier. London 1898. V 7. p. 203. 3—26; Theophanes Byzantius in: Dexippi. Eunapii. Petri Patricii. Prisci. Malchi

կական գաղութը, որից սերում է նաև այն Վարդանեսը, որը 711—713 թթ. Փիլիպիկոս անվամբ և միակամության հակումներով բյուզանդական կայսր հռչակվեց[3]։ Պերդամոնին ժամանակակից մի այլ հայկական գաղութ հավանաբար կար Պիդրայում (Անատոլիկոն բանակաթեմ), ուր երիտասարդ տարիներին գաղթած պետք է լիներ Լեոն V Հայը[4]։ Հայ հոգևորականներին, որոնք 571/72 թ. կամ դրանից քիչ անց ապաստան էին գտել Կոստանդնուպոլսում, հավանաբար պետք է վերագրել Կոստանդնուպոլսի պատրիարք Եվտիքեսի (552—565, 577—582) φύσις-ի և ὑπόστασις-ի տարբերակման մասին (Περὶ τῆς διαφορᾶς τῆς φύσεως καὶ ὑποστάσεως) աշխատության 577/78 թ. կատարված հայերեն թարգմանությունը[5]։ Ըստ Սեբեոսի[6] 628 թ. պարսկական Հայաստանի մարզպան Վարազ Տիրոց Բագրատունին ևս փախել է Բյուզանդական կայսրություն[7]։

Menandri Historiarum quae supersunt, e recensioni Im. Bekkeri et B. G. Niebuhrii, Bonnae 1829, p. 485, 12—22; Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, առաջաբանով, համեմատությամբ, հավելվածներով և ծանոթագրություններով Ա. Տէր-Միքելյանի. Վաղարշապատ, 1893, էջ 75, տե՛ս նաև J. B. Bury. A history of the Later Roman Empire from Arcadius to Irene (395 A. D. to 800 A. D.), II, London 1889 (վերահրատարակություն՝ Amsterdam 1966), p. 96; Ю. Кулаковский. История Византии. II (518—602), Киев, 1912 (վերահրատարակ. London 1973), с. 362; Laurent 1919, p. 199, n. 5, p. 197, n. 5; idem. L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886. Nouvelle édition, revue et mise a jour par M. Canard. Lisbonne 1980, p. 236, n. 21 (p. 258), E. Stein. Studien zur Geschichte des byzantinischen Reiches, vornehmlich unter den Kaisern Justinus II. und Tiberius Constantinus. Stuttgart, 1919, p. 21—25, 38 f.; P. Goubert, Byzance avant l'Islam, I: Byzance sous les successeurs de Justinien. L'empereur Maurice. Paris, 1951, p. 65—68; P. Charanis. 1961, p. 196 f.; idem. Ethnic changes in the Byzantine Empire in the seventh century.—Dumbarton Oaks Papers 13(1959), p. 23 f. (վերահրատարանությունը տե՛ս նույնի, Studies II); հմմտ. նաև Narratio de rebus Armeniae, édition critique et commentaire par G. Garitte (Corpus Scriptorum Christianorum Orientalium 132, Subsidia 4). Louvain, 1952 (վերահրատարակությունը՝ 1967), § 77—92, p. 37—39 (տե՛ս նաև նույն տեղում, էջ 175—225 [commentaire] ինչպես նաև Χρ. Μπαρτικιώτου, Το Βυζάντιον εἰς τὰς ἀρμενικὰς πηγὰς [Βυζαντινὰ κείμενα καὶ μελέται. 18], Θεσσαλονίκη 1981, 66 f.).

[3] Այդ մասին տե՛ս H. Gelzer. Pergamon unter Byzantinern und Osmanen (Abhandlungen der Kgl. Preußischen Akademie der Wissenschaften, Anhang). Berlin, 1903, S. 42—48 (հատկապես էջ 42 և հտ., ուր հեղինակը հիմնվում է VI տիեզերական ժողովի վաստաթղթի Ագաթոն Մարկավաղապետի վերջաբանի վրա (տե՛ս J. B. Mansi. Sacrorum conciliorum nova et amplissima collectio, XII, Florentiae, 1766, p. 189 և հտ., հատկապես էջ 192).

[4] Տե՛ս Theophanes Continuatus I 1 in: Theophanes Continuatus, Ioannes Cameniata, Symeon Magister, Georgius Monachus, ex recognitione Im. Bekkeri. Bonnae, 1838, p. 6; հմմտ. Iosephi Genesii Regum libri quattuor, recensuerunt A. Lesmueller-Werner et I. Thurn (Corpus Fontium Historiae Byzantinae, 14), Berolini—Novi Eboraci, 1978, I 6, p. 6 f.; I 8, p. 8; Այդ մասին Charanis, 1961, p. 196 և հտ. ծան. 3 և 4, Charanis 1959, p. 28 և հտ., ծան. 29—31. Պիդրայի հեղինակը անհայտ է։

[5] Հրատ. P. Ananian. L'opusculo di Eutichio, patriarca di Costantinopoli, sulla „Distinzione della natura e Persona".—Armeniaca. Mélanges d'études arméniennes. Venise 1969 (տե՛ս Clavis Patrum Graecorum, III, cura et studio M. Geerard. Turnhout 1979, Nr. 6940, p. 313 և Μπαρτικιώτου, 1981, σ. 173, այսուհետև Εὐτύχιος), p. 316—382, այդ մասին նաև S. S. Arevšatyan, Le „livre des êtres" et la question de l'apparténance de deux lettres dogmatiques anciennes.—Revue des Etudes Arméniennes, N. S. 18 (1984), p. 23—32, հատկապես էջ 24 և հտ.։

[6] Սեբեոս, 1979, էջ 132—133։

[7] Այդ մասին տե՛ս A. Stratos. Les frontières de l'Empire au cours du VIIe siècle.—Actes du XIVe Congrès International des études byzantines, Bucarest, 6—12 septembre 1971, II, Bucureşti 1975, p. 427 n. 34;

Մուսուլման արաբների Հայաստան կատարած ներխուժումներից հետո[8], խալիֆ Օսմանի (644—656) իշխանության տարիներին, Հայաստանից բնակչության նոր տեղաշարժ սկսվեց դեպի Բյուզանդական կայսրություն։ Ըստ ալ-Բալազուրիի[9], զորավար Հաբիբ իբն Մասլամա ալ-Ֆիհրիի մոտավորապես 6—8 հազարանոց զորաբանակի կողմից Կարնո քաղաքի (հուն. Թեոդոսիուպոլիս, արաբ. Կալիկալա, այժմ՝ Էրզրում) գրավումից հետո քաղաքի հայ բնակչության մի մեծ զանգված ստիպված էր թողնել իր հայրենիքը և գաղթել Բյուզանդական կայսրության տարածք։ Այդ իրադարձությունը տեղի է ունեցել 654 թ.[10]։ Հայտնի չէ, թե արդյոք այդ փախստականները Բյուզանդական կայսրության ո՞ր շրջաններն են բնակեցրել. ամենայն հավանականությամբ՝ Փոքր Ասիան։

Հայոց կաթողիկոս Ներսեսի (հավանաբար Ներսես III-ի, 641—661) մահից հետո կամ դրանից էլ առաջ Հայաստանից վտարվել են հայ պավլիկյաններ, նրանց մի մասը ըստ երևույթին բնակություն է հաստատել Բյուզանդական կայսրության Պոնտական մարզերում[11]։ Հայաստանից պավլիկյանների այս վտարման մասին վկայություն է թողել 717—728 թթ. Հայոց կաթողիկոս Հովհաննես Օձնեցին իր «Ընդդէմ Պաւղիկեանց» աշխատության մեջ[12]։

---

[8] Այդ մասին տե՛ս H. Manandean. Les invasions arabes en Arménie (Notes chronologiques).—Byzantion 18 (1948), p. 163—197. А. Н. Тер-Гевондян. Армения и Арабский Халифат. Ереван 1977, с. 23 и сл., հմմտ. նաև Laurent 1919, p. 191, n. 3:

[9] Ph. Kh. Hitti. The Origins of the Islamic state, being a translation of the Kitâb Futuḥ al-Buldân of al-Imâm Abu'l ʿAbbas Aḥmad ibn-Jâbir al-Balâdhurî, I (Columbia University Studies in history, economics and public law, 68), New York 1916 (վերահրատարակությունը՝ Beirut 1966), p. 309 sq. = El-Beladori's „Kitâb futuḥ el-buldân" (Buch der Eroberung der Länder), nach de Goeje's Edition (Leyden 1866) ins Deutsche übersetzt von O. Rescher, Leipzig 1917—1923, p. 219 sq.:

[10] Ըստ Тер-Гевондян 1977, с. 40 և հտ. Բալազուրին իր շարադրանքում իրադարձությունը թվագրելով խալիֆ Օսմանի (644—656) իշխանության սկզբով, Հաբիբի 644 թ. ռազմարշավը դեպի Հայք շփոթում է նույն զորահրամանատարի 654 թ. դեպի Կարնո քաղաք ձեռնարկած ռազմարշավի հետ։ Հմմտ. նաև Lilie 1976, p. 245, n. 167:

[11] Հենո Լիկոսի (հայ. Դայլ, այժմ՝ Կելկիլ) գետաբերանի շրջանում, ուր այն թափվում է Իրիսի (այժմ Յեզիլ Իրմակ) մեջ, Նեոկեսարիայի (այժմ՝ Նիկսար) և Նիկոպոլսի (ժամանակակից Էնդերեսի մոտ) ուղղությամբ (տե՛ս P. Lemerle. L'histoire des Pauliciens d'Asie Mineure d'aprés les sources grecques.—Travaux et Mémoires 5 (1973) 74, n. 70). Դա մի տարածք է, որը դեռևս անտիկ շրջանում պատկանում էր հայերին (տե՛ս Strabon. Geographia XII 3, 36, p. 559 C):

[12] Տեառն Յովհաննու իմաստասիրի Աւծնեցւոյ մատենագրութիւնք թարգմանեալ ի լատին բարբառ երկասիրութեամբ Տեառն Հ. Մկրտիչ Աւգերեանի. Վենետիկ, 1834, էջ 89—90։ Այդ մասին տե՛ս Sirarpie Der Nersessian. Une apologie des images du septième siécle. Byzantion 17 (1944/45), p. 70 և հտ., H. Grégoire. Précisions géographiques et chronologiques sur les Pauliciens.—Bulletin de la Classe des Lettres et des Sciences Morales et Politiques de l'Académie Royale de Belgique 33 (1947), p. 194, 298—300. St. Runciman. The Medieval Manichee. A study of the Christian dualist heresy. Cambridge, 1947, p. 34; Charanis 1961, p. 197; Charanis 1959, p. 29, ծան. 35; N. G. Garsoian. The Paulician Heresy. The Hague—Paris, 1967, p. 114; Lemerle 1973, p. 53—56; Lilie 1976, p. 245, ծան. 168, Μπαρτικιάν, 1981, σ. 68 f., ինչպես նաև Նույնի՝ Источники для изучения истории павликианского движения. Ереван 1961, с. 34—41 (այդ մասին M. Loos-ի գրախոսությունը տե՛ս Byzantinoslavica 24 [1963], p. 135—141:

Ինչպես տեղեկացնում է հայ պատմագիր Ասողիկը (Ստեփանոս Տարոնացի), 693 թ. ևս հազարավոր հայեր ստիպված էին գաղթել բյուզանդական Փոքր Ասիա[13]։

Մոտավորապես 705/06 թ., Հուստինիանոս II-ի երկրորդ կառավարման ժամանակաշրջանում, արաբների դեմ բարձրացրած ապարդյուն ապստամբությունից հետո բազմաթիվ հայ նախարարներ իրենց շքախմբերով, Սմբատ Բագրատունու գլխավորությամբ փախան Բյուզանդական կայսրության տարածք և բնակություն հաստատեցին այնտեղ. նախ, հավանաբար, Տայքի հյուսիսում գտնվող Թուխարք ամրոցում և ապա՝ Սև ծովին մերձակա Էգրիսի (Եդեր) երկրի Փոթիում (հայ. Փոյթ), այսինքն՝ Մենգրելիայում (Լազիկա)[14]։ Այս հայերի մի մասը մնաց Բյուզանդական կայսրությունում[15], մյուսները, սակայն, մի քանի տարի անց, վերը հիշատակված Վարդաս Փիլիպիկոս կայսեր իշխանության տարիներին, վերադարձան Հայաստան[16]։ Հավանաբար արաբների դրդմամբ կա-

---

13 Ստեփանոս Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. ՍՊԲ, 1885, էջ 124։ Des Stephanos von Taron Armenische Geschichte, aus dem Altarmenischen übersetzt von H. Gelzer und A. Burckhardt (Scriptores sacri et profani, fasc. 4). Leipzig, 1907, II 4, p. 92, այդ մասին Laurent 1919, p. 191, n. 1, Laurent—Canard 1980, p. 236 f., Stratos 1971, p. 433, n. 73:

14 Տե՛ս Պատմութիւն Ղեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց. ՍՊԲ, 1887, էջ 35։ Ստեփաննոս Տարոնեցի, էջ 124—125, այդ մասին Laurent 1919, p. 184, n. 4, p. 205, Laurent—Conard 1980, p. 217, n. 211, p. 237, n. 28, p. 2 9, n. 48:

15 Այն ժամանակ Բյուզանդական կայսրության մեջ, հատկապես Կոստանդնուպոլսում ապրող նշանավոր հայեր հունական եկեղեցու հայրերի (Կեղծ Դիոնիսիոս Արիոպագացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, Գրիգոր Նյուսացի) մի քանի երկերի հայկական Քարգմանությունների հիշատակարաններում հանդիպում են որպես մեկենաս (Դավիթ հյուպատոս Կենարիոս) և թարգմանիչ (Ստեփանոս քահանայ, Ստեփանոս Գերգող, կամ Սյունիքի եպիսկոպոս Ստեփանոս՝ Մովսես Սյունեցի եպիսկոպոսի աշակերտ) (տե՛ս Գարեգին Ա կաթողիկոս [Հովսեփյան]. Ցիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, N 18, սյուն. 53/54 [712 թ.], N 19, սյուն. 53/54 [715 թ.], N 20, սյուն. 55/56 [719 թ.])։ Այդ հիշատակությունների մասին ինձ Երևանում տեղեկացրել է Ազատ Բոզոյանը, որին ցանկանում ենք հայտնել մեր շնորհակալությունը հայկական բնագրի թարգմանության համար։

16 Այդ մասին տե՛ս և հետևյալը Ղևոնդ, էջ 36։ Ստեփաննոս Տարոնեցի, էջ 125; Հմմտ. նաև Theoph. I, p. 382 de Boor, արարչագործության աղեքսանդրյան 6204 թ. տակ; Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166—1199), éditée pour la première fois et traduite en français par J.—B. Chabot. II, Paris 1901, XI 17, p. 482, նաև Kitab al-ᶜUnvan (Histoire universelle), écrite par Agapius de Menbidj, éditée et traduite en français par A. Vasiliev, seconde partie.— Patriologia Orientalis, edd. R. Graffin—F. Nau, 8, Paris—Fribourg-en-Brisgau 1912, p. 500, այդ մասին Laurent 1919, p. 184, n. 4, p. 193, n. 6, p. 194, n. 1, 6, 7, p. 197, n. 3—5, p. 198, n. 1, p. 205, 206, n. 2, Laurent—Canard 1980, p. 218, n. 211, p. 237, n. 28, p. 239, n. 48, նաև նույն տեղում, էջ 216 և հտ., ծան. 205 և ծան. 211, p. 237, n. 29, p. 239, n. 48, F. Dölger, Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches von 565—1453, 1. Teil: Regesten von 565—1025, München—Berlin 1924, N 262, p. 32 (703 թ.), N 272, p. 35 (3. 4. 712 թ.), J. Muyldermans, La domination arabe en Arménie..., Paris 1927, p. 98 f., Charanis 1961, p. 197, Charanis 1959, p. 29. 31, Lille 1976, S. 120, n. 54, S. 243 f., Anm. 158—163, մասնավորապես ծան. 162, S. 245—247, ծան. 178, Тер-Гевондян, 1977, с. 75—78, 82, Р. М. Бартикян. К вопросу о павликианском движении в первой половине VIII в.—Византийский Временник, 8 (1956), с. 127 и сл.: Հր. Բարթիկյանը կայսր Փիլիպիկոսի կողմից հետապնդվող և հալածվող հայերի մեջ պավլիկյաններ է տեսնում, ելնելով հատկապես հայկական սկզբնաղբյուրներից, որոնց նա կապում է վերևում վկայակոչված սկզբնաղբյուրների հետ (տե՛ս նաև Бартикян, 1961, с. 34—41):

տարված այս հայրենադարձությունից հետո, որի հետևանքով ամայացան բյուզանդական մի շարք շրջաններ, ինչպես տեղեկանում ենք Թեոփանեսից[17], Փիլիպիկոսը թերևս վճռել էր հայերին իր երկրի տարածքից վռնդել, դրանով իսկ նրանց ստիպելով հաստատվել Մելիտենեում և Չորրորդ Հայքում։ Բյուզանդական կայսրությունից հայերին արտաքսելու մասին նման տեղեկություններ են հաղորդում Միքայել Ասորին[18] և Ագապիոս Մմբեջցին[19], որոնք նաև ավելացնում են, որ այս հայերը այնուհետև անցել են արաբների կողմը։ Խալիֆ Վալիդ I-ը (705—715), ըստ Ագապիոս Մմբեջցու[20], նրանց բնակեցրել է Մելիտենե (Մալաթիա) և Սամոսատ (Շամշատ) քաղաքներում, այն դեպքում, երբ Միքայել Ասորին[21] խոսում է ընդհանրապես արաբների մասին, որոնք բնակեցրել են հայերին Մելիտենեում և նրա շրջակայքում, ինչպես նաև Չորրորդ Հայքում, այսինքն՝ Թեոփանեսի[22] կողմից ևս նշված մարզերում։ Այնտեղ հայերի թիվը հետո շեշտակիորեն աճեց, հիմնվեցին ամրություններ և նրանցից արաբները կազմակերպեցին օգնական զորաբանակներ։ Միքայել Ասորին պարսավում է բյուզանդական կառավարության դավանաբանական քաղաքականությունը և ատելությունը միաբնակների՝ հայերի և ասորիների մեծ մասի նկատմամբ, որոնց հետ դավանակից էր նաև Միքայել Ասորին։

Հայ հեղինակ Մովսես Կաղանկատվացին կամ Դասխուրանցին իր «Աղվանից պատմութեան» մեջ[23] հիշատակում է նաև Փիլիպիկոս (711—713) կայսեր կառավարման ժամանակ, մոտավորապես 694 թ. Կոստանդնուպոլսում սկզբում որպես պատանդ պահվող, և ապա հավանաբար 699 թ. այնտեղից հայրենիք՝ արաբների մոտ վերադարձած իրենց հոր՝ Աղվանքի Վարազ Տրդատ իշխանի դավաճանությունից հետո որպես գերի պահվող նրա որդիների ազատվելու և դեպի Աղվանք պատվավոր վերադարձի մասին[24]։

Ռ.—Յ. Լիլին[25] կասկած է հայտնում Թեոփանեսի[26] այն վկայության ճշտության վերաբերյալ, ըստ որի հայերը տեղահանվել են Բյուզանդական կայսրությունից և ենթադրում է, որ Փիլիպիկոսը իր տիրապետության տակ գտնվող հայերի մնացորդներին ստիպել է հաստատվել Բյուզանդիայի և խալիֆայության միջև կռվախնձոր դարձած Չորրորդ Հայքում, որով նա հասել է միայն այն բանին, որ բռնի տեղափոխությունների ենթարկված հայերը միացել են արաբներին, դրանից հետո խալիֆ Վալիդ I-ը կամ նրանց թողել է իրենց նոր բնակավայր Չորրորդ Հայքում կամ բնակեցրել է քիչ ավելի հեռվում՝ Մելիտենեում և Սամոսատում, երկու վայրերում, որոնք հատուկ հիշատակում է Ագապիոս Մմբեջցին[27]։

---

17 Theoph. I. p. 382, 1—7 de Boor, արարչագործության աշխարհի 6204 թ. տակ։

18 Mich. Syr. XI 17, II. p. 482 Chabot.

19 Agap. Manb., p. 500 Vasiliev.

20 Նույն տեղում։

21 Mich. Syr., a. o.

22 Theoph. I, a. o.

23 Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից Աշխարհի (քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի). Երևան, 1983, էջ 311—313; The History of the Caucasian Albanians by Movsēs Dasxuranci, translated by C. J. F. Dowsett (London Oriental Series, vol. 8). London—New York—Toronto 1961, III 12, p. 202—204.

24 Հմմտ. այդ մասին Мкртумян 1981, с. 79, և Dowsett 1961, նշված հատվածի ծանոթագրությունները։

25 Lilie 1976, S. 244, n. 162.

26 Theoph. I, a. o.

27 Agap. Manb., a. o.

Ավելի ուշ, Կոստանդին կայսեր իշխանության տարիներին (741—775) հայերը փախան Բյուզանդական կայսրություն. այսպես, ըստ հայ պատմիչ Ղևոնդի[28] վկայության, VIII դ. 50-ական թթ., այսինքն Կարնո քաղաքը (Թեոդոսիուպոլիս, արաբ. Կալիկալա) բյուզանդացիների կողմից գրավումից և քաղաքը 754 թ. թշնամուն վերահանձնելուց հետո, քաղաքի քրիստոնյա բնակիչները թույլտվություն էին խնդրել կայսրից վերադառնալ Բյուզանդական կայսրություն, հետևելով բյուզանդական բանակին։ Սակայն հունական և ասորական սկզբնաղբյուրները, ինչպես նաև արաբագիր հեղինակ ալ-Բալաձուրին խոսում են Կարնո քաղաքի հայ բնակչությանը[29] Բյուզանդիա՝ այս դեպքում Թրակիա գաղթեցման մասին[30]։ Ալ-Բալաձուրին[31] հիշատակում է Քուշան ալ-Արմանիին, որպես բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ զորավար, որը բյուզանդական կայսեր կողմից ուղարկվել է Կարնո քաղաքը նվաճելու։ Այս ազնվական հայ Քուշանը (հայ. Գուսան?), որը Չորրորդ Հայքի կառավարիչն էր 749/50 թ., Մրվան II-ի (744—750) պարտությունից և Աբասյանների կողմից դեպի Եգիպտոս փախուստի մատնվելուց հետո, թողեց արաբական բանակում իր պաշտոնը և անցավ բյուզանդացիների կողմը։ Դրանից հետո կայսր Կոստանդին V-ը Քուշանին դարձրեց զորավար[32]։ Մի քանի տարի անց Քուշանը, ըստ Թեոփանեսի,

---

28 Ղևոնդ, էջ 129։

29 Տե՛ս Theoph. I. p. 427 de Boor, *աշխարհաստեղծության ավելքսանդրյան 6243 թ. (=մ. թ. 751/52 թ.)* (ἠχμαλώτευσεν τοὺς Ἀρμενίους). *Համա. նաև նույն տեղում, էջ 429* de Boor, *աշխարհաստեղծության ավելքսանդրյան 6237 թ., բացի դրանից* Nicephori, archiepiscopi Constantinopolitani, Opuscula historica, edidit C. de Boor, Lipsiae 1880, p. 66 de Boor, *ինչպես նաև էջ 62, նաև նույնի,* Antirrheticus tertius.—Patrologia Graeca, ed J.—P. Migne, 100, Lutetiae Parisiorum 1860, col. 508 C—509 A, Mich. Syr. XI 15, II p. 521 *և հտ.* Chabot *(սելևկյան 1066 թ.=մ. թ. 754/55 թ.), նաև նույն տեղում,* XI 25, II p. 523 *և հտ.* Chabot *(նույն տարվա տակ),* Eliae, metropolitae Nisibeni, Opus chronologicum, pars prior. Interpretatus est E. W. Brooks (Corpus Scriptorum Christianorum Orientalum, Scriptores Syri, Versio, ser. 3, tom. 7). Romae—Parisiis—Lipsiae 1910, p. 83 *(հիջրայի 140 թ. = 25.5. 757—13.5.758 մ. թ.),* Anonymi auctoris Chronicon ad annum Christi 1234 pertinens, I. Interpretatus est I.—B. Chabot (Corpus Scriptorum Christianorum Orientalium 109, Scriptores Syri, Versio, ser. 3, tom. 14), Lovanii 1937 *(վերահրատարակություն՝ 1952),* p. 263 *(սելևկյան 1063 թ.=մ. թ. 751/52 թ.),* Agap. Manb. p. 528 Vasiliev *(հիջրայի 137 թ.=մ. թ. 27.6.754—15.6.755 թ.),* al-Baladuri, p. 312 Hitti=p. 221 *և հտ.* Rescher:

30 Տե՛ս Theoph. I p. 429 de Boor, *աշխարհաստեղծության ավելքսանդրյան 6247 թ. տակ,* Nik. Patr. p. 66 de Boor, *նույնի,* Antirrheticus III, PG, 100, col. 508 C—509 A, *Համա. նաև արաբագիր հեղինակ* Agap. Manb. p. 544 Vasiliev („plusieurs villes"), *այդ մասին* Laurent 1919, p. 184, n. 4, p. 192, n. 5 *և* 8, p. 208, Charanis, 1961, p. 199, Charanis 1959, p. 30, Charanis, The transfer of population as a policy in the Byzantine Empire,—Comparative Studies in Society and History 3/2 (1961), p. 144 *(վերահրատարակված՝ նույնի,* Srudies III). Lilie 1976, S. 165, 249:

31 Al-Baladuri p. 312 Hitti=p. 221 sq. Rescher:

32 *Տե՛ս ատ-Տաբարի և հատկապես* Tarikh at-Tabari par Abu Jafar Mohammad Ibn Jarir at-Tabari, édition critique par M. Abu-l-Fath Ibrahim, 1—X, Le Caire 1960—1969, VII p. 436, Chronique de Denys Tell-Mahre, quatrième partie, publiée et tradutte par J.—B. Chabot. Traduction française (Bibliothèque de l'Ecole des hautes études. Sciences philologiques et historiques, 112), Paris 1895, p. 56 sq. *(սելևկյան 1065 թ.=մ. թ. 753/54 և սելևկյան 1066 թ.=մ. թ. 754/55 թ.),* Agap. Manb. p. 531 Vasiliev *(հիջրայի 133=մ. թ. 9.8.750—29.7. 751 թ.), այդ մասին* Lilie 1976, S. 165, n. 12, S. 246 *(այստեղ ծան. 170-ում սխալմամբ իբրև կողքի հղում է Ղևոնդ, 130,* Agap. Manb. 531 Vasiliev). *Համա. վերևում և ճշգրիտ* Тер-Гевондян 1977, *էջ 101 (ծան. 13)։*

Կապադովկիայում բնակեցված ոչ մեծաթիվ հայերի հետ կրկին վերադարձավ արաբների մոտ[33]։

VIII դ. կեսերին Բյուզանդիա եկած Տաճատ (Ταζάτης) Անձևացին[34] ևս, որը Լևոն IV-ի (775—780) կողմից նշանակվել էր Բուկելարիոն բանակաթեմի ստրատեգ, հետագայում՝ 782 թ. կրկին անցավ արաբների կողմը[35]։ Այն ժամանակ, որպես Փոքր Ասիայի բանակաթեմերի ստրատեգներ, նրա կողքին գործում էին այլ հայեր ևս. օրինակ՝ Արտավազդ (Ἀρτάβασδος) Մամիկոնյանը Անատոլիկոնում, որը մոտավորապես 771 թ. մտել էր բյուզանդական ծառայության մեջ[36], ինչպես նաև Վարազ Տիրոցը (Βαριστερότζης և ոչ Καριστερότζης) Արմենիակոնում և Մուսալակի որդի (ὁ τοῦ Μουσαλακίου) Գրիգորը՝ Օպսիկիոնում[37]։

Կոստանդին V-ի թագավորության ժամանակներից մեզ հայտնի են նաև նախարարների այլ տեղաշարժեր արաբական ճնշման հետևանքով դեպի Բյուզանդիա[38], սակայն հայտնի չէ, թե Բյուզանդական կայսրության ո՞ր մասում կարող էին հաստատվել այս հայերը. հավանաբար՝ Փոքր Ասիայում, չնայած այն ժամանակ չէր բացառվում նաև բնակեցումը Թրակիայում[39]։

790 թ. ևս, այսինքն՝ արդեն Կոստանդին VI-ի (780—797) իշխանության տարիներին, տեղի ունեցավ զանգվածային գաղթ խալիֆայության իշխանության տակ գտնվող և բարձր հարկերի տակ կքած Հայաստանից։ Ավելի քան 12 000 հայեր Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ ստիպված էին կանանց, երեխաների ու շքախմբի հետ, որոնք չէին մտնում բերված թվի մեջ, փախչել Բյուզանդական կայսրություն, որտեղ նրանց ուրախությամբ ընդունեց կայսրը և բերրի հողեր տվեց. սակայն մենք չգիտենք թե որտե՞ղ և

---

33 Տե՛ս Theoph I p. 430 de Boor, արարչագործության աղեքսանդրյան թ. 6248 (=756/57 մ. թ.), Agap. Manb. p. 538 Vasiliev (հիջրայի 137 թ.=մ. թ. 27.6. 754—15.6.755 թ.), որը այս կապակցությամբ խոսում է հայերի և ալանների մասին՝ որպես Բուշանի մարդկանց։ Հմմտ. նաև al-Baladuri p. 312 Hitti=p. 221 Rescher. այդ մասին տե՛ս Laurent. 1919, p. 198, Charanis 1961, p. 199, Charanis 1959, p. 30. Charanis 1961, p. 144, Lilie 1976. S. 165, Anm. 12. S. 246, Anm. 170—172, Тер-Гевондян 1977, с. 100, прим. 12—13, с. 103, Մարտիրոսյան 1980, ս. 71 (Ղևոնդ, գլուխ 29-ի շուրջ)։ Տե՛ս նաև ներքևում, ծան. 53։

34 Տե՛ս Ղևոնդ, էջ 155։ Այդ մասին Laurent 1919. p. 193, Anm. 3, p. 194, Anm. 3, p. 195, 198, Anm. 1, p. 208, Charanis 1961, p. 206, մոտ 750 թ. Charanis 1959, p. 35, Lilie 1976, S. 246, Anm. 173, 320, շուրջ 760 թ.։

35 Տե՛ս Theoph. I p. 451 de Boor, արարչագործության աղեքսանդրյան 6270 թ., p. 456 de Boor, արարչագործության աղեքսանդրյան 6247 թ., Ղևոնդ, էջ 155, 159, Հմմտ. այդ մասին Laurent 1919. p. 198, ծան. 1 („vers 780"), p. 209, Charanis 1961, p. 206. Charanis 1959, p. 35, Anm. 78 և 79. Lilie 1976, S. 167, 174, 246, Anm. 178, S. 320:

36 Տե՛ս Ղևոնդ, էջ 133—139, Theoph. I, p. 431 de Boor, արարչագործության աղեքսանդրյան 6270 թ.։ Այդ մասին հմմտ. Laurent 1199. p. 193, ծան. 5, նաև նույն տեղում, էջ 192, ծան. 11, էջ 194, ծան. 3, էջ 195, 209։

37 Այդ մասին տե՛ս Adontz N. Lage et l'origine de l'empereure Basile I.—Byzantion 9 (1934). p. 242 f., Charanis 1961, p. 206. Charanis 1959, p. 35, Anm. 79:

38 Տե՛ս Ղևոնդ, էջ 133, այդ մասին Laurent 1919. p. 184, Anm. 4, Laurent-Canard 1980, p. 237. Anm. 32 և 35 (p. 258). Charanis 1961, p. 197, Anm. 8, Charanis 1959, p. 29. Anm. 33, Lille 1976, S. 247, Anm. 176, Тер-Гевондян 1977, с. 103 և հետ. էջ 105, Մարտիրոսյան 1981, ս. 71 (Ղևոնդի 32-րդ գլխի շուրջ)։ 777 թ. տեղի ունեցած արաբական ջարդից հետո մեկ այլ տեղաշարժի մասին տեղեկացնում է. Laurent 1919, p. 209:

39 Հմմտ. ծան. 30։

կայսրության ո՞ր մասում[40]։ Այդ հայերը ևս, ըստ Խառանիսի[41], նախ և առաջ հայ ազնվականներ են եղել։ Պատահական չէ, որ հայ պատմագիր Ասողիկը (Ստեփանոս Տարոնացի)[42] բողոքում է, որ հայ ազնվականությունը կարող էր փախչել երկրից, մինչդեռ հասարակ ժողովուրդը հանձնված էր արաբների ներողամտությանը։

852 թ. հետո ևս, երբ խալիֆ ալ-Մութավաքիլը (847—861) էմիր Բուղայի զորքով Հայաստան ուղարկեց, կրկին բազմաթիվ հայ երևելիներ ապաստան փնտրեցին Բյուզանդիայում, ինչպես վկայում է արաբ հեղինակ Իբն Վադիհ ալ-Յակուբին[43]։ Այս իրադարձությունը տեղի է ունեցել նոր անհանդուրժող խալիֆ ալ-Մութավաքիլի օրոք արաբների պետական ճնշումների դեմ 850—852 թթ. հայերի ապստամբության ճնշումից հետո եկող տարիներին։ Այս խալիֆը նախ՝ 850 թ. Հայաստանում կառավարիչ նշանակեց Աբու Սաիդ Մուհամադ իբն Յուսուֆ ալ-Մարվազիին, երբ նրա հարկահավաքը՝ Հայաստանի «պատրիկների պատրիկ» Բագրատ Բագրատունու փեսա Մուսա իբն Զարարան վերադարձավ խալիֆայության մարզերը, և բացի այդ հենց Վասպուրականում գործում էր ալ-Ալա իբն Ահմադ աս-Սավաֆին։ Այն բանից հետո, երբ երկուսն էլ Աշոտ Արծրունու և Բագրատ Բագրատունու ղեկավարությամբ ապստամբած հայերից պարտվեցին, հավանաբար սերդեն 851 թ. սպանված Աբու Սաիդի որդին՝ Յուսուֆ իբն Աբու Սաիդը նշանակվեց Հայաստան մարզի ոստիկան հետնորդ և մի նոր բանակով այնտեղ ուղարկվեց։ Բագրատ Բագրատունուն և նրա ազնվական ուղեկիցներին խաբեությամբ ձերբակալելուց հետո Յուսուֆը բոլորին շղթայակապ ուղարկեց Սամառա՝ խալիֆայության այն ժամանակվա աթոռանիստը, իսկ ինքը նոր ռազմարշավի ելավ դեպի Հարավային Հայաստան, որի ընթացքում՝ 852 թ. սկզբին սպանվեց։ Հենց որ խալիֆին հասավ արաբների նոր պարտության լուրը, կրկին Հայաստան ուղարկեց նոր մեծ բանակ Բուղա ալ-Կաբիր աշ-Շարաբիի գլխավորությամբ, որը մեծ հաջողություն ունեցավ։ Աշոտ Արծրունին յուրայինների հետ ստիպված էր հանձնվել Վասպուրականում և անմիջապես դեպի Սամառա ուղարկվել։ Նրա եղբայր Գուրգեն Արծրունին, որը սկզբում կարողացել էր հաղթանակի հասնել արաբ զորքի նկատմամբ, Բուղայի կողմից խաբեությամբ տարվեց խալիֆա-

[40] Տե՛ս Ղևոնդ, էջ 168—109, Ասողիկ, էջ 134։ Այդ մասին Laurent 1919, p. 184 ծան. 4, p. 192, ծան. 8, p. 193, ծան. 2, p. 194, ծան. 2, p. 207 (այստեղ, ինչպես 785—786 թթ. իրադարձությունների, այնպես էլ 792 թ. տեղաշարժերի համար հիմք են ծառայել արաբական ջարդերը), Laurent-Canard 1980, p. 111, ծան. 47, p. 232, ծան. 212, p. 258, ծան. 32, Charanis 1961, p. 197 և հտ., Charanis 1959, p. 29, Lilie 1976, S. 147, Тер-Гевондян 1977, с. 117, [illegible] 1981, с. 71 (Ղևոնդի 42-րդ գլխի շուրջ), с. 85 (Ասողիկի նշված հատվածի շուրջ), հմմտ. նաև Մովսես Կաղանկատվացի, էջ 291 և հտ. և հատկապես էջ 292, Мовсэс Каланкатуаци. История страны Алуанк, перевод с древнеармянского, предисловие и комментарии Ш. В. Смбатяна. Ереван, 1984, III, 2, с. 146 և հտ., մասնավորապես ծան. 22 (էջ 228), որը հայերի փախուստը բազմաթիվ շրջաններից դեպի Բյուզանդական կայսրություն (գլխավորապես հույները) բացատրում է խալիֆ Հարուն ար-Ռաշիդի (786—809) իշխանության տարիներին արաբների ձեռնարկած ծայրահեղ ճնշումներով։ Հմմտ. նաև [illegible] 1981, с. 79։

[41] Charanis 1961, p. 197 f.։

[42] Ասողիկ, էջ 134 և հտ., այդ մասին Laurent 1919, p. 192, ծան. 11, Laurent-Canard 1980, p. 95, n. 47 (էջ 111) և հատկապես էջ 237, ծան. 234 (էջ 258), հմմտ. նաև նույն տեղում, էջ 237 և հտ., ինչպես նաև Charanis 1961, p. 197 f., n. 10։

[43] Տե՛ս Ibn wadiḥ al-Yacqūbī, Historiae, ed. Houtsma, Leiden 1983, II, p. 598, այդ մասին Marquart J. Osteuropäische und ostasiatische Streifzuge.— Leipzig 1903, S. 413 և հտ., Laurent 1919, p. 183, ծան. 4, S. 184, ծան. 4, 192, ծան. 10, Laurent-Canard 1980, p. 237, ծան. 33 (p. 2.8)։

յության մայրաքաղաք։ Արաբները ամայացրին երկիրը, բնակեցրին այն արաբներով և սպանեցին ու ստրկացրին բազմաթիվ հայերի[44]։

Կոստանդնուպոլսում կայսր Բարսեղ I-ի (867—886) իշխանության տարիներին «Բարեծին և բարեփառ» (εὐγενῶν καὶ ἐνδόξων), «Մեծ Հայքի հզորների» (κατὰ τὴν Μεγάλην Ἀρμενίαν μέγα δυνάμενων) գաղութի մասին հաղորդում է «Ս. Մարիամ Նորավկայի վարքը»[45]։ Վկայություններ, որոնց մի քանի տարի առաջ մանրամասնաբար անդրադարձել է Հր. Բարթիկյանը[46]։ Անշուշտ այս վարքի տեղեկությունները Թրակիական Մեսինայում (անտիկ Դրիցիպարա, իսկ այսօր՝ թուրք. Բույուկ Կառըշտրռան) նստակյաց դարձած սրբերի մասին հիմք են տալիս ենթադրել Թրակիայի Մեսինայի շրջանում շատ ավելի վաղ, գուցե արդեն Մորիկ կայսեր (582—602) օրոք, գոյություն ունեցած հայերի գաղութի մասին։ Մարիամի և նրա ամուսին դրունգար Նիկեփորի (ծագումով Թրակիայի Կամարա բնակավայրից) երկու որդիների անունները՝ Βαρδάνης և Βάσης վկայում են, որ դրանք պատկանել են Մամիկոնյանների հայկական նախարարական տանը։ Ս. Մարիամ Նորի դամբարան-եկեղեցու քահանա Նիկետաս Կաննակեսի (Νικήτας ὁ Καννάκης) մականունը ևս, որը հիշատակվում է այդ վարքում, ինչպես ենթադրում է Հր. Բարթիկյանը, հիշեցնում է Մամիկոնյանների նախահայրերից մեկի՝ Կոնակի անունը և կրկին թույլ է տալիս անդրադառնալ ս. Մարիամի և Մամիկոնյանների ազգակցության հարցին։ Ինչ վերաբերում է ս. Մարիամի փեսայի՝ քրոջ ամուսին Βάρδας ὁ Βρατζῆς անվանը, որը հիշատակվում է Թրակիական Մեսինայի առնչությամբ, ապա այն ևս հայկական ծագում ունի. Βρατζῆς-ը կրճատ ձևն է Ἰβηρατζῆς-ի (հայկական-ացի ածանցով) և նշանակում է վրացի։ Հենց այդպես էին հայ միաբնակները անվանում Քաղկեդոնի ժողովը ընդունող հայրենակից երկաբնակներին։ Հր. Բարթիկյանը այդ տվյալներից եզրակացնում է, որ արդեն Մորիկի ժամանակ հիմնված և հետո՝ Կոստանդին V-ի օրոք ընդարձակված հայկական գաղութները Թրակիայի մարզերում չէին սահմանափակվում միայն Փիլիպուպոլսի շրջանով, որտեղ հայերը վկայվել են ավելի ուշ, այլ նաև ընդգրկել են Մեսինայի տարածքը, ինչպես նաև Բիզիի (այսօր՝ թուրք. Վիզե) և Մեդեայի (այսօր՝ թուրք. Միդիա) շրջակայքը, որոնք գտնվում են Սև ծովի ափին, արևվելյան Թրակիայում։ IX դարի II կեսի հայ փախստականներից էր նաև այն ազնվական Աշոտը, որի հանձնարարությամբ 905 թ. ոմն Թումայել Կ. Պոլսում արտագրել է հայկական ավետարան, ինչպես երևում է այդ ընդօրինակության հիշատակարանից[47]։

Որոշ դեպքերում աղբյուրները նշում են, թե Բյուզանդական կայսրության որ մասում են հաստատվել գաղթած հայերը[48]։ Մոտավորապես 571/2 թ. պարսիկների դեմ ապստամբությունից հետո այնտեղ փախած մեծաթիվ հայեր, ամենից առաջ ազնվականներ և հոգևորականներ, պետք է որ հաստատված

---

44 Այդ մասին տե՛ս Тер-Гевондян, 1977, с. 138—147, հմմտ. նաև Р. М. Бартикян. Размышления о Житии св. Марии Новой.—Българско средновековие. Българо-съветски сборник в чест на 70-годишната на проф. Иван Дуйчев, София, 1980, с. 63, прим. 13, Հ. Մ. Բարթիկյան. Մամիկոնյան (՞) սուրբ Մարիամ Նորավկայի (մահ. 902/903 թ.) բյուզանդական վարքը.—Էջմիածին, 1975, № ԺԲ, էջ 41, սյուն. 1։

45 Acta Sanctorum, Novembris IV. collecta, digesta, illustrata a H. Delehaye et P. Peeters. Bruxelles 1925, p. 688—705 (Bibliotheca Hagiographica Graeca Nr. 1164), այդ մասին տե՛ս H.—G. Beck, Kirche und theologische Literatur im Byzantinischen Reich, München 1959, S. 565. ծան. 5։

46 Տե՛ս Бартикян, 1980, с. 62—64, հմմտ. նաև Բարթիկյան, 1975, էջ 39—44։

47 Տե՛ս Գարեգին Հովսեփյան, 1951, № 41, սյուն. 105/106 և հտ.։

48 Տե՛ս Laurent 1919, p. 194։

Լինեն Պերգամոնում և նրա շրջակայքում։ Ինչպես տեսանք, այս գաղութը է սերում հետագայում կայսր դարձած Վարդանես-Փիլիպիկոսը։ Մյուս կողմից, հավանաբար VII դարի կեսերին Բյուզանդական կայսրություն փախած պավլիկյան աղանդի ներկայացուցիչները հաստատվեցին Պոնտոսի շրջանում գտնվող Արմենիակոն բանակաթեմի մարզերում։ Մոտավորապես 705/6 թ. արաբների դեմ բարձրացրած ապստամբությունից հետո, Բյուզանդական կայսրության կողմից ընդունված բազմաթիվ նախարարներ, Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, իրենց շքախմբով, Հուստինիանոս II-ից նոր նստավայրեր ստացան Այսրկովկասում՝ Սև ծովի ափին գտնվող Փոթիում (Փոթ), VIII դարի կեսերին հայ Քուշանի ղեկավարած բյուզանդական զորքերի կողմից Կարնո քաղաքի գրավումից և այդ բանակի հեռանալուց հետո, ըստ Ղևոնդի տեղեկության, հայերը հրավիրվել են Բյուզանդական կայսրություն և կամավոր կերպով բնակվել են ամենից առաջ Թրակիայում, իսկ ըստ այլ սկզբնաղբյուրների[49] նրանց բռնի են գաղթեցրել։ Մյուս կողմից, Քուշանի հետ մոտավորապես 750 թ. Չորրորդ Հայքից Բյուզանդիա տեղափոխված մարդիկ, հավանաբար, բնակեցվել էին Կապադովկիայում, որտեղից էլ նրանք, քիչ ավելի ուշ[50], նույն Քուշանի ղեկավարությամբ կրկին անցել են արաբների կողմը[51]։

Հայերի մեծ մասի բնակեցման վայրը հայտնի չէ, նրանց մեծագույն մասը հավանաբար մնացել էր Փոքր Ասիայում և այնտեղ բնակություն էր հաստատել[52]։

Բալկանյան թերակղզու բյուզանդական մարզերում հայերի առաջին բնակավայրեր հայտնի են սկսած VI դարից[53], Մորիկ կայսեր իշխանության վերջին տարիներից մինչև VIII դարի կեսերը[54]։

Խալիֆայությանը սահմանակից հայկական բնակավայրերի միջոցով բյուզանդական կառավարությունը հնարավորություն էր ստանում ազդել փախստականների բուն հայրենիքի վրա։ Մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս կայսր Փիլիպիկոսի օրոք 711/12 թ. (Սմբատ Բագրատունու մարդիկ), Կոստանդին V կայսեր ժամանակ՝ VIII դարի կեսերին (Քուշան), ինչպես նաև 782 թ. կայսրուհի Իրինեի (780—802) օրոք (Տաճատ Անձևացի) տեղի ունեցած անցուդարձերը, Բյուզանդիայի համար վտանգավոր էր հայ վերաբնակիչների կապը անվստահելի տարրերի հետ[55]։ Վտանգ, որը հավանաբար այդ չափի չէր

---

49 Տե՛ս վերևում ծան. 29 և 30։

50 Ըստ (Pseudo-) Dion. Tellm. IV, p. 101 և հտ., Chabot սելևկյան 1080 թ. (= մ. թ. 768/69)։ Հավանաբար այդ իրադարձությունը տեղի է ունեցել ավելի վաղ։

51 Հմմտ. Theoph. I. p. 430 de Boor. արարչագործության աղեքսանդրյան 6248 թ. տակ։

52 Մեծ մասամբ սահմանին մոտ, որտեղից կարող էին հեշտությամբ կապի մեջ մտնել իրենց հին հայրենիքի հետ և հնարավոր դեպքում՝ շատ արագ վերադառնալ։ Այդ մասին հմմտ. Lilie 1976, S. 247:

53 Տե՛ս Charanis 1961, p. 198 f., Charanis 1959, p. 30, 32 և հտ., Charanis, The transfer..., p. 141 f., Lilie 1976, S. 23 f., S. 238, ծան. 134:

54 Օրինակի համար տե՛ս Charanis 1961, p. 199, Charanis 1959, p. 30 և հտ., Charanis, The transfer..., p. 144, Lilie 1976, S. 248—250. Ditten H. Umsiedlungen von Slawen aus Bulgarien nach Kleinasien einer-und von Armeniern und Syrern nach Thrakien andererseits zur Zeit des byzantinischen Keisers Konstantin V (Mitte des 8. Jh.).—Miscellanea Byzantina (Akten des 3. Symposiums „Bulgaria Pontica Medii Aevi", Nesebar. 27.—30. Mai 1985), Sofia 198□ (տպագրության ընթացքում)

55 Այդ մասին տե՛ս Lilie 1976, S. 247, ծան. 178—180։ Ավելի ուշ, այսպես կոչված, ռազմական արվեստի տրակտատում „De velitatione bellica" (Περὶ παραβρομῆς πολέμου)՝ որը սխալմամբ վերագրվում է Նիկեփոր Փոկաս կայսրին (նոր հրատ. G. T. Dennis—Three Byzantine military treatises, Text, translation, and notes [Corpus Fontium His-

չինի, եթե նրանք բնակեցված լինեին Թրակիայում, հեթանոս բուլղարների հետ սահմանի մոտակայքում։ Հայ փախստականներին կայսրության մեջ ընդունելու բյուզանդական շահագրգռությունը և այն բարձր դիրքը, որ հատկապես սկսած VIII դարի կեսերից հայերը, որպես զինվորական հրամանատարներ, զբաղեցնում էին Բյուզանդիայում, ցույց է տալիս միաժամանակ, թե ինչ կարևոր դեր ունեին նրանք Բյուզանդական կայսրության ղեկավարման մեջ, հատկապես նրա պաշտպանունակությունը ապահովելու գործում։

Բացի Հուստին II-ի օրոք հավանաբար արդեն անկում ապրող Պերդամոնի և գուցե նաև Պիդրայի[56] հայկական գաղութներից, որոնք գտնվում էին քիչ անց ձևավորված Անատոլիկոն բանակաթեմի տարածքում, X դարից գիտենք նաև նույն Անատոլիկոն բանակաթեմի Պլատոնիկոն, ինչպես նաև Թրակեսիոն բանակաթեմի Պրինե հայկական գաղութների մասին։ Լևոն VI-ի (886—912) կողմից Կրետե կղզու (IX դարի 20-ական թթ. իսպանական արաբներին դիմված) վերանվաճման 911/12 թ. փորձերի առնչությամբ այդ գաղութների մասին տեղեկացնում է Կոստանդին Ծիրանածինը իր «Արարողությունների մասին» գրքում[57], ինչպես նաև արաբական այդ նույն Կրետե հենակետի դեմ ավելի ուշ՝ 949 թ. ձեռնարկված ռազմարշավի կապակցությամբ նույն հեղինակ Կոստանդին Ծիրանածինը հայեր է հիշատակում փոքրասիական, հատկապես Թրակեսիոն բանակաթեմի τάγματα-ից (զինվորական ստորաբաժանում)[58]։ Միաժամանակ տեղեկություններ է տալիս այդ հայ զինվորների ճշգրիտ թվաքանակի մասին։ «Թրակեսիոն բանակաթեմի ծովափը պաշտպանող հայերի»[59] 600 զինվորների կողքին կռվողներ են ենթադրվում նաև Պրինեից[60]։

---

toriae Byzantiae, 251 գլուխ Հ, էջ 152, 1—31, մասնավորապես, էջ 132, 11 և հտ.) և ծագում է X դարի II կեսից, Արմենիակոն բանակաթեմի (τῶν Ἀρμενιακῶν θεμάτων) սահմաններում գտնվող βίγλα ստորաբաժանման հայ զինվորները ներկայացված են որպես անվստահելի տարր։ Այդ մասին տե՛ս Charanis 1961, p. 217 f. Anm. 108 a; Sp. Vryonis, Jr., Byzantium: the social basis of decline in the eleventh century.—Greek Roman and Byzantine Studies 2/2 (1959), p. 157—175, նաև էջ 166 և հտ., մասնավորապես հայերի դերի, հայերի ու հույների փոխադարձ հակակրանքի մասին տե՛ս նույն տեղում, էջ 169 և հտ. (Նոր հրատ. տե՛ս Vryonis Sp. Byzantium: its internal history and relations with the Muslim world. Collected Studies,—London 1971, II).

[56] Տեղագրությունը անհայտ է, տե՛ս ծան. 4։

[57] Constantini Porphyrogeniti imperatoris De cerimoniis aulae Byzantinae libri duo...,e recensione Io. Iac. Reiskii..., I. Bonnae 1829, II 44, p. 651, f մասնավորապես էջ 652, 655 և հտ., էջ 656, 657 և հտ.։ Կոստանդին Ծիրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6. Բյուզանդական աղբյուրներ Բ), Երևան, 1970, էջ 145—150։

[58] Konst. Porph., De cerim. II 45, p. 666. Կոստանդին Ծիրանածին, էջ 149։

[59] Konst. Porph., De cerim. II 44, p. 663, II 45, p. 667, Կոստանդին Ծիրանածին, էջ 150։

[60] Այդ մասին տե՛ս Charanis P. On the ethnic composition of Byzantine Asia Minor in the thirteenth century.—Προσφορὰ εἰς Στίλπωνα Π. Κυριακίδην, Thesalonike 1953, p. 142—144 (վերահրատարակությունը՝ նույնի, Studies VIII), նույնի, The linguistic frontier in Asia Minor towards the end of the ninth century.—Actes du XIVe Congrés International des études byzantines, Bucarest, 6—12 septembre 1971, II, Bucureşti 1975, p. 315, Ahrweiler H. L'Asie Mineure et les invasions arabes (VIIe — IXe siècles).—Revue historiqe 227/1 (janviers-mars 1962) p. 18 և հտ. (վերահրատարակությունը՝ նույնի, Etudes sur les structures administratives et sociales de Byzance, London 1971, IX), հմմտ. նաև նույնի՝ L'histoire et la géographie de la région de Smyrne entre les deus occupations turques (1081—1317), particuliérement au XIIIe siècle.—Travaux et Mémoires 1 (1965), p. 20, ծան. 91:

Մնացած դեպքերում հազվադեպ են տեղեկությունները Բյուզանդական կայսրություն փախած հայերի թվաքանակի մասին, ինչպես օրինակ՝ 790 թ. հաշվում ենք 12 000 մարդ, բացի կանանցից և երեխաներից[61]։

Ընդհանրացնենք։

Տեղաշարժերը ընդհանուր առմամբ լինում էին մի կողմից արտաքին թշնամու՝ արևելքում սասանյան պարսիկների, իսկ ավելի ուշ մահմեդական-արաբների Բյուզանդական կայսրություն ներխուժման և տարածքների նվաճման հետևանքով, մյուս կողմից՝ հարևան երկրներում ժողովրդի մի մասի ուժեղ ճնշման հետևանքով, որտեղ նրանք տիրապետող ժողովրդից կամ կրոնից տարբերվում էին կա՛մ էթնիկապես և կա՛մ կրոնով, կա՛մ էլ հավասարապես երկուսով էլ։ Դա հատկապես տեղի էր ունենում իշխող շերտերում կատարվող փոփոխությունների, կառավարության փոփոխության, հեղաշրջումների և քաղաքացիական պատերազմների ժամանակ կամ համապատասխան երկրների իշխող դասի դեմ բարձրացրած ապստամբությունների պարտությունից հետո։

Հայաստանից, որի մեծագույն մասը նախկինում պարսկական տիրապետության տակ էր, և միայն մի փոքր մասն էր պատկանում Բյուզանդիային[62], արդեն 571/2 թ. մեծաթիվ հայ ազնվականներ իրենց ընտանիքներով և ողջ շքախմբով Պարսկաստանի դեմ ապստամբության պարտությունից հետո եկան Բյուզանդիա. նրանց միացան նաև վրացիներ։ Նրանց հավանաբար բնակեցրին Պերգամոնում՝ Փոքր Ասիայի արևմուտքում։ Պարսից շահ Խոսրով I Անուշիրվանը պահանջեց նրանց վերադարձնել, սակայն կայսր Հուստին II-ը մերժեց, ասելով, թե նրանք քրիստոնյա են[63]։

Հատկապես իրենց շքախմբերով ազնվական հայերի նման դաղթերը, այսինքն տեղաշարժերը դեպի Բյուզանդական կայսրություն կրկնվում էին, երբ մահմեդական արաբները VII դարի կեսերից սկսած ներխուժեցին Հայաստան և փորձեցին հպատակեցնել երկիրը։ Արդեն արաբների առաջին ներխուժումներից հետո հայերի մի մասը լքեց հայրենիքը, ինչպես օրինակ՝ Կարնո քաղաքի բնակիչների մեծ մասը 654 թ. (և ոչ թե 644 թ.). սակայն մենք չգիտենք թե նրանք Բյուզանդիայի ո՞ր մասում բնակեցվեցին, թերևս, ամենայն հավանականությամբ՝ Փոքր Ասիայում[64]։

701 թ. սկսած, հատկապես արաբների տիրապետության դեմ ուղղված ապստամբության պարտությունից հետո, բազմաթիվ հայեր, հիմնականում կրկին ազնվականներ, իրենց շքախմբերով թողեցին հայրենիքը և հաստատվեցին Բյուզանդիայում, ինչպես օրինակ՝ մոտավորապես 707 թ., արաբների դեմ բարձրացված 703 թ. ապստամբությունից հետո, խալիֆ Արդ ալ-Մալիքի (685—705) օրոք, Մուհամեդ զորահրամանատարի բանակի կողմից Հայաստանը նվաճելուց հետո։ Այս հայերը հաստատվեցին Պոնտոսի ափերին, սակայն դրանց մի մասը արդեն Փիլիպիկոս կայսեր ժամանակ (711—713 թ.) վերադարձավ Հայաստան, ենթարկվելով արաբներին, մյուսներն էլ, որ դրանից

61 Տե՛ս ծան. 40 և 41։ Հմմտ. նաև հայերի հնագույն տեղաշարժերի և բնակեցումների մասին Հր. Բարթիկյանի ներածական ելույթը՝ Р. Бартикян. Миграция армян в XI веке. Причины и последствия. Ἡ μετανάστευσις τῶν Ἀρμενίων τοῦ ια'αἰῶνος: αἰτίαι καὶ συνέπειαι.—XVe Congrès International d'études byzantines. Rapports et co-rapports, 12, Athènes 1976 (այդ մասին հմմտ. Byzantinische Zeitschrift 70 (1977), S. 507).

62 Բացառաբար կայսր Մորիկի կառավարման տարիների՝ 591 թ. հետո և մինչև 628 թ.՝ կայսր Հերակլի կառավարման շրջանը։

63 Տե՛ս ծան. 2։

64 Տե՛ս ծան. 8—10։

հետո բնակություն էին հաստատել Չորրորդ Հայքում. նույնպես արաբներին ենթարկվեցին։

Հետագայում հայերը, այդ թվում նաև նշանավոր Քուշան հայը, որն արաբական ծառայության մեջ էր, VIII դարի 50-ական թթ. սկզբին, Օմայանների դեմ բարձրացված վերջին ապստամբությունից (747—750) հետո, Կոստանդին V-ի (741—775) տիրապետության տարիներին փախան Բյուզանդական կայսրության տարածք։ Նրանք բնակեցվեցին Կապադովկիայում, բայց քիչ հետո կրկին անցան արաբների կողմը։ Սրանց հակառակ, այն հայերը, որոնք ըստ Ղևոնդի տեղեկության Կարնո քաղաքի նվաճումից հետո հետևեցին նահանջող բյուզանդական բանակին (754 թ.), նոր հայրենիք գտան Թրակիայում։ Ավելի ուշ, Կոստանդին V-ի իշխանության վերջում, երկիրը թողեցին ուրիշ հայ ազնվականներ, նախ և առաջ խալիֆ ալ-Մանսուրի տիրապետության դեմ 774/76 թ. ապստամբության հետևանքով և փախան Բյուզանդական կայսրություն. դարձյալ հայտնի չէ, թե որտեղ են նրանք հաստատվել։

Դա վերաբերում է նաև 12 000 մարդկանց, դարձյալ իրենց շքախմբով հայ ազնվականներ, որոնք 790 թ., արդեն Կոստանդին VI-ի (780—797) օրոք, արտասովոր ծանր հարկերի պատճառով գաղթեցին արաբների կողմից նվաճված Հայաստանից։ Ըստ էության պետք է փախստական հայերի բնակավայրը փնտրել Փոքր Ասիայում, թեև չի բացառվում բնակեցումը Բյուզանդական կայսրության եվրոպական մասի բնակավայրերում, այն է՝ Թրակիայում[65], որովհետև ասորիների կողքին հայերի բռնի բնակեցումների մասին Կոստանդին V-ի ժամանակներից, VIII դարի 50-ական թթ. մինչև 70-ական թթ. վերջը, սրա որդի և հաջորդ Լևոն IV-ի (775—780) օրոք հաղորդում են ասորական և բյուզանդական սկզբնաղբյուրները[66], իսկ «Քիթաբ ալ-ուլյուն»[67] արաբական սկզբնաղբյուրը վկայում է, որ արաբների կողմից Կոստանդնուպոլսի երկրորդ պաշարումից՝ 717/18 թ. մինչև IX դարի սկիզբը Թրակիայում դեմոգրաֆիական և տնտեսական վիճակը բավականին բարձր էր, որը չափազանց կարևոր էր Բյուզանդիայի համար, որովհետև տնտեսական հարաբերությունների շնորհիվ ձեռք էր բերում նոր հարկատուներ և գյուղատնտեսական ապրանքների արտադրողներ (նաև արհեստավորներ՞), ինչպես նաև զինվորներ։

850—852 թթ. խալիֆ ալ-Մութավաքիլի (847—861) օրոք կատարվող ճնշումների դեմ հայերի ապստամբության պարտությունից հետո, ինչպես նաև ավելի ուշ՝ բյուզանդական կայսր Բարսեղ I-ի ժամանակ կրկին դեպի Բյուզանդական կայսրություն փախչում էին ամենից առաջ հայ ազնվականներն իրենց շքախմբի հետ[68]։

Բացի մեզ հայտնի՝ ապստամբությունների պարտությունից և մեծ ճնշումներից հետո Հայաստանից տեղի ունեցած տեղաշարժերի դեպքերից, հայկական սկզբնաղբյուրներից մեկում (Հովհաննես Օձնեցի) տեղեկանում ենք նաև պավլիկյան աղանդին պատկանողների վտարման մասին Հայաստանից դեպի Բյուզանդական կայսրություն. մի տեղեկություն, որը հավանաբար վերաբերում է VII դարի կեսերին։ Այս փախստականները պետք է ապաստան գտնեին Բյուզանդական կայսրության արևելքում, Պոնտոսի շրջանում[69]։

---

65 Հմմտ. ծան. 30 և 39, նաև ծան. 49։

66 Տե՛ս այդ մասին Ditten 1985:

67 Տե՛ս E. W. Brooks, The Arabs in Asia Minor (641—750) from Arabic sources.—The Journal of Hellenic Studies 18 (1898), p. 23. ծան. 6. այդ մասին տե՛ս P. Charanis, Observations on the demography of the Byzantine Empire.—Thirteenth International Congress of Byzantine Studies. Main papers. 14, Oxford 1966, p. 15, ծան. 2 (վերահրատարակությունը՝ Charanis, Studies I), Lille 1976, S. 216—219, մասնավորապես էջ 218 և 251, հմմտ. նաև նույն տեղում, էջ 128, ծան. 78, էջ 241, ծան. 151։

68 Տե՛ս ծան. 43—47։

69 Տե՛ս ծան. 11—12։

Այն հայ ազնվականները (նախարարներ), որոնք իրենց շքախմբով, սկզբում սասանյան պարսիկների, ապա՝ մահմեդական արաբների դեմ բարձրացրած ապստամբությունների ալիքներից հետո փախչում էին Բյուզանդական կայսրության տարածք, որպես կանոն բյուզանդացիների կողմից բնակեցվում էին Փոքր Ասիայում, մեծ մասամբ իրենց հայրենիքի սահմանների մոտակայքում. այնտեղից մեծաթիվ հայեր դաս հաճախ վերադառնում էին հայրենիք։ Նյութ կողմից, աղբյուրներից հայտնի է բյուզանդական կայսր Մորիկի օրոք, VI դարի վերջին հայերի բռնի բնակեցումը Թրակիայում։ Մի շարք սկզբնաղբյուրներ (Թեոփանես, Նիկիփոր պատրիարք) հայերի բնակեցումը Թրակիայում որակում են որպես բռնագաղթ, իսկ մյուսները (Ղևոնդ)՝ կամավոր բնակեցում։ Կամավոր տեղահանություն էր հայերի գաղթը Կարնո քաղաքից VIII դարի 50-ական թթ., բռնի տեղահանություն էր հայերի դաղթը Մելիտենեի շրջանից Թրակիա։ Բայց որ բուլղարների հետ սահմանի վրա, Թրակիայի ամրացված վայրերում տեղի ունեցող այդ բնակեցումների հետևանքով, VIII դարի II տասնամյակից սկսած Բյուզանդիայի և Բուլղարիայի միջև ռազմական որևէ վեճի մասին աղբյուրները ոչինչ չեն հայտնում, ապա կարելի է ենթադրել, որ այդքան երկար ժամանակ երկու տերությունների միջև խաղաղություն է տիրել, սակայն 765 թ. մի նոր և երկարատև պատերազմական շրջան է սկսվում։

Ցավոք, տեղի սղության պատճառով հնարավոր չէ անդրադառնալ VI դարից մինչև IX դար դեպի Բյուզանդական կայսրություն հայերի բոլոր հայտնի բռնի տեղաշարժերի ծավալուն թեմային[70]

Գերմաներենից թարգմանեց և հայերեն գրականության հղումներով օժտեց Ա. Ա. ԹՈՂՈՅԱՆԸ*։

ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯН В ВИЗАНТИЙСКОЙ ИМПЕРИИ ОТ ЮСТИНИАНА I ДО IX ВЕКА

ХАНС ДИТТЕН (ГДР)

Резюме

Неустойчивая политическая жизнь в стране, а также конфессиональные гонения и угнетения коренного населения чужестранными завоевателями стали причиной того, что многие армянские общины вынуждены были оставить родину и поселиться в Византийской империи. Начиная с VI в., на Балканах и в Малой Азии образовались армянские поселения. На анализе византийских и арабских источников в статье подробно рассматривается хронология переселения армян в Византии, уточняются районы, где они поселялись.

---

[70] Դրանց մասին մանրամասնությունները, ինչպես և ընթացիկ գրականությունը վերաբերող վկայություններով, տե՛ս մեր հրատարակվող աշխատության երկրորդ գլխում („Zwangsansidlungen"). H. Ditten. Ethnische Verschiebungen zwischen der Balkanhalbinsel und Kleinasien vom Ende des 6. bis zur Mitte des 9. Jahrhunderts u. Z. (Berliner Byzantinische Arbeiten): VIII դարի սկզբանից. մասնավորապես, Կոստանդին V կայսեր իշխանության տարիներին տեղի ունեցած բռնի բնակեցումների մասին տե՛ս H. Ditten. Umsidlungen von Slaven...

* Շնորհակալություն եմ հայտնում Անահիտ Գրիգորյանին, Ելենա Ջաղացպանյանին և պ. գ. դ. Կարեն Յուզբաշյանին օգտակար խորհուրդների և թարգմանության ընթացքում ցուցաբերված օգնության համար (թարգմ.)։